

2

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Յ. Վ. ՅՈՒՋԲԱՇՅԱՆ, Ա. Ա. ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ, Վ. Ի. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Ց. Վ. ՅՈՒՋԲԱՇՅԱՆ, Ա. Ա. ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ, Վ. Ի. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

2

Հանրակրթական հիմնական դպրոցի
2–րդ դասարանի դասագիրք

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2023

ԵՐԱՇԽԱՎՈՐՎԵԼ Է ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ՀՏԴ 373:78(075.3)
ԳՄԴ 85.31g72
Յ 671

Տպագրվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատվերով

Մասնագիտական խմբագիր՝
Արթուր Ավանեսով

Յ 671 Յուզբաշյան Յուրի, Փահլևանյան Ալինա, Ավետիսյան Վերա
Երաժշտություն 2: Հանրակրթական հիմնական դպրոցի 2–րդ դասարանի դասագիրք / Յ. Յուզբաշյան, Ա. Փահլևանյան, Վ. Ավետիսյան.— Եր.: «Զանգակ» հրատ., 2023.— 96 էջ:

ՀՏԴ 373:78(075.3)
ԳՄԴ 85.31g72

Դասագրքին կից տեսաձայնային նյութերը կարող եք գտնել շապիկին պատկերված QR կոդի միջոցով կամ հետևյալ հղումով.

www.zangak.am/978993999217

Դասագրքի էջերում տեղադրված QR կոդերը համապատասխան նյութերի անմիջական հղումներն են:

ISBN 978–9939–99–21–7

© «Զանգակ–97» ՍՊԸ, 2023
© Յուզբաշյան Յ., 2023
© Փահլևանյան Ա., 2023
© Ավետիսյան Վ., 2023
© ՀՀ ԿԳՄՍՆ, 2023

Սիրելի՛
փոքրիկ բարեկամ

Այս դասագիրքը քեզ կծանոթացնի երաժշտության տեսակներին:

Կսովորեցնի՝

- *ունկնդրել երաժշտություն,*
- *երգել,*
- *նվագակցել երգերին ու հնչող երաժշտությանը,*
- *երգել ձեռքի նշաններով և նոտաներով,*
- *հորինել մեղեդիներ:*

Այս նկար–նշանները քեզ կհուշեն,
թե ինչ հանձնարարություն է անհրաժեշտ կատարել.

ԲԱՆԱԼԻ ԲԱՌԵՐ

ԿԱՏԱՐՈՒՄ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ



ԴԻՏՈՒՄ

ՃԱՆԱՉԻ՛Ր ԵՎ ՀԻՇԻ՛Ր

ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՈՒՆԿՆԴՐՈՒՄ

ԿԱՐԴԱ՛Ր ԵՎ ՀԻՇԻ՛Ր

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԽՈՍՔ

ԲԱՌԱՊԱՇԱՐ

ՍՏԵՂԾՈՒՄ

Բարի՛ երթ երաժշտության գեղեցիկ աշխարհում:

ԹԵՄԱ 1

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՐԶ ԵՎ ՄԱՏՉԵԼԻ ԺԱՆՐԵՐԸ (ՏԵՍԱԿՆԵՐԸ)

Ամեն օր դու քո շրջապատում լսում ես երգեր, պարեր, քայլերգեր: Հաճախ հենց դու ես լինում կատարողը: Այժմ դու կծանոթանաս տարբեր երգերի, պարերգերի, քայլերգերի և կհամոզվես, որ երաժշտության այդ երեք տեսակները հնչող երաժշտության հիմքն են:

ԵՐԳ

Երգ	Երաժշտություն
Հեղինակ	Կատարող
Ունկնդիր	Կոմպոզիտոր

Երգը երաժշտության տեսակ է:

Երգը ստեղծվում է բառի և երաժշտության բարեկամությունից: Երգը ստեղծում են թե՛ ժողովուրդը, թե՛ կոմպոզիտորը (երգահանը):

Երգը մեզ տանում է երաժշտության մեծ ու գեղեցիկ աշխարհը, բարեկամացնում երաժշտական ընտանիքի անդամների հետ:

ԲԱՌԱՊԱՇԱՐ



1. ***Երգել, նվագել, լսել*** *բառերը ճիշտ գործածի՛ր տրված նախադասությունների մեջ: Գրի՛ առ տետրումդ:*

- Ես սիրում եմ, երբ իմ ծննդյան օրը ուրախ երգեր են ..... :
- Իմ ընկեր Սուրենը սիրում է ուրախ երաժշտություն ..... :
- Ավագ եղբայրս հաճախ է կիթառ ..... :

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ինչո՞ւ են երեխաներն այցելում երաժշտական դպրոց կամ խմբակ:

ՈՒՆԿՆԴՐՈՒՄ

ԿԱՔԱՎԻ ԵՐԳԸ

Երաժշտ.՝ Կոմիտասի

ՕՐՈՐՈՑԱՅԻՆ

Երաժշտ.՝ Վոլֆգանգ Մոցարտի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *«Կաքավի երգը» և «Օրորոցային» երգերը լսելիս ի՞նչ նմանություն ու տարբերություն ես նկատում:*

2. *Բնական նվագարաններով նվագակցի՛ր «Օրորոցային» երգին:*

ԿԱՏԱՐՈՒՄ

ԴՊՐՈՑԻ ՃԱՄՓԱՆ

Երաժշտ.՝ Ռուբեն Ալթունյանի

- Սկզբում երգի՛ր ձայնագրության հետ միասին:
- Այնուհետև կատարի՛ր առանց ձայնագրության:

ԴՊՐՈՑԻ ՃԱՄՓԱՆ



ԴՊՐՈՑԻ ՃԱՄՓԱՆ

Խոսք՝ Ս. Կապուտիկյանի
Երաժշտ.՝ Ռ. Ալթունյանի

Գնում ենք ուրախ, ձեռք ձեռքի տված,
Երգում միասին՝ աղջիկ ու տղա,
Փռված է մեր դեմ մոր գրկի պես բաց,
Գեղեցիկ ու լայն դպրոցի ճամփան:

2 անգամ

Վազում է մեզ հետ, աղմկում առուն,
Հեզ օրորվում են ծառերը աշնան,
Բոլորիս սիրով կանչում է, տանում
Գեղեցիկ ու լայն դպրոցի ճամփան:

2 անգամ

Ձգվում է տնից մինչև դասարան
Մանուկ օրերի ոսկեհյուս շղթան՝
Այնպես մտերմիկ, այնպես հարազատ,
Գեղեցիկ ու լայն դպրոցի ճամփան:

2 անգամ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Նորից երգիր: Կատարիր ձեռքերի ու մարմնի արտահայտիչ շարժումներ:*

2. *Բնական նվագարաններով նվագակցիր երգին:*

3. *Ովքե՞ր են երգի բառերի և երաժշտության հեղինակները:*

ՃԱՆԱՉԻ՛Ր ԵՎ ՀԻՇԻ՛Ր

Կոմիտասը հայ կոմ-պոզիտոր է: Նա հավաքագրել և մշակել է հազարից ավելի ժողովրդական երգեր: Կոմիտասը շատ է սիրել երեխաներին: Ահա «Մանկիկ Վահագնին» գրած նրա նամակը.

«Սիրո՛ւն մանկիկ, կայտա՛ռ մանկիկ... սիրի՛ր մայր լեզուն, նրա գիրը, որը ծնողի սրտի և մտքի պես միշտ թարմ է, միշտ կենսատու: Ամեն մի լեզու ունի իր երաժշտությունը: Սիրի՛ր հայ երաժշտությունը, նրա խորհրդավոր ու գաղտնի ձայները: Դրանք ազնիվ, ազնիվ զգացմունքներ քեզ կպարգևեն»:

ՎՈԼՖԳԱՆԳ ԱՄԱԴԵՈՒՍ ՄՈՑԱՐՏ

Մոցարտը ավստրիացի կոմպոզիտոր է: Նա երեք–չորս տարեկանից ստեղծագործել է և հանդես եկել կատարումներով: Գրել է բազմաթիվ օպերաներ, սիմֆոնիաներ և այլ երաժշտական ստեղծագործություններ:

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԽՈՍՔ

1. *Այնպիսի հա՛րց տուր ընկերոջդ, որ նա պատասխանի մեջ գործածի* ***կոմպոզիտոր*** *բառը:*

2. *Մեկ–երկու նախադասությամբ հիմնավորի՛ր, որ երգը երաժշտության ամենատարածված տեսակներից է:*

ԳՆԱՀԱՏՈՒՄ

1. *Լսի՛ր ընկերոջդ կատարումը: Հայտնի՛ր քո կարծիքը նրա կատարման վերաբերյալ:*
Թող նա էլ իր կարծիքը հայտնի քո կատարման վերաբերյալ:

ԵՐԳԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Օրորոցային երգ
Կատակ երգ
Խաղերգ
Պարերգ

Հնչյուն
Ռիթմ

Օրորոցայինը, կատակ երգը, խաղերգը, պարերգը երգի տեսակներ են:

Երաժշտությունը բաղկացած է կարճ և երկար տևողությամբ հնչյուններից: Այդ հնչյունների տևողությունների հաջորդական կատարումը երաժշտության ***ռիթմն*** է:

ԲԱՌԱՊԱՇԱՐ

1. *Փորձի՛ր ինքնուրույն մեկնաբանել երգի տեսակների անվանումները:*

ՈՒՆԿՆԴՐՈՒՄ

«Քո՛ւն եղիր, բալա՛ս» և «Գացե՛ք տեսեք» երգերն ունկնդրելիս ուշադրությո՛ւն դարձրու երգչային ձայնի տեսակներին:

ՔՈ՛ՒՆ ԵՂԻՐ, ԲԱԼԱ՛Ս
Երաժշտ.՝ Բարսեղ Կանաչյանի

ԳԱՑԵ՛Ք ՏԵՍԵՔ
Հայկական ժողովրդական երգ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Քո կարծիքով «Քո՛ւն եղիր, բալա՛ս» և «Գացե՛ք տեսեք» երգերից յուրաքանչյուրը երգի ո՞ր տեսակին է պատկանում:*
2. *Այս երգերից ո՞րը կցանկանայիր սովորել և կատարել: Ինչո՞ւ:*
3. *Արդյո՞ք ունկնդրելիս հասկացել ես երգերի բառերը:*

ԿԱՏԱՐՈՒՄ

ԱՐԵ՛Վ, ԱՐԵ՛Վ

Հայկական ժողովրդական երգ

«Արև՛, արև՛» երգը ունկնդրելիս և կատարելիս ուշադրությո՛ւն դարձրու երաժշտության ռիթմին:

ԱՐԵ՛Վ, ԱՐԵ՛Վ



ԱՐԵ՛Վ, ԱՐԵ՛Վ

Ժողովրդական երգ



Արև՛, արև՛, եկ, եկ,
Ջիզի քարին վեր եկ,
Սև–սև՛ ամպեր, հեռացեք,
Արևին ճամփա՛ տվեք:

Թողեք՝ նա գա մեզ մոտ,
Նրա լույսին ենք կարոտ,
Կարմի՛ր արև, եկ, եկ,
Ջիզի քարին վեր եկ:

1. *Երգի կարճ և երկար տևողության հնչյունները պատկերվում են կարճ և երկար գծերով:*

Կարճ հնչյուններ՝ – – – –

Երկար հնչյուններ՝ — —

Կարճ տևողության հնչյունները կարող ենք արտահայտել ***վազել*** բառով կամ ***թի–թի*** վանկերով:

Երկար տևողության հնչյունը կարող ենք արտահայտել ***քայլ*** բառով կամ ***թա*** վանկով:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Հետևելով օրինակին՝ «Արև՛, արև՛» երգի առաջին մասի կարճ տևողության հնչյունները նշի՛ր կարճ գծերով, իսկ երկար տևողության հնչյունները՝ երկար գծերով:*

Օրինակ՝ – – – – — —
Ա–րև՛, ա–րև՛, ե՛կ, ե՛կ

2. *Երգի ռիթմը արտահայտի՛ր* ***քայլ***, ***վազել*** *բառերով կամ* ***թի***, ***թա*** *վանկերով: Կարճ հնչյուններին վազի՛ր, երկարներին քայլի՛ր:*

Օրինակ՝ – – – – — —
Վա–զել, վա–զել, քայլ, քայլ
թի–թի, թի–թի, թա, թա,

ՍՏԵՂԾՈՒՄ

1. *Փորձի՛ր հորինել երգ: Այդ երգի բառերի ռիթմը գրառի՛ր* ***քայլ***, ***վազել*** *բառերով կամ* ***թի***, ***թա*** *վանկերով:*

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԽՈՍՔ

1. *Մեկ–երկու նախադասությամբ ներկայացրո՛ւ երգի այն տեսակը, որը քեզ ամենաշատն է դուր գալիս:*

2. *Ինչպե՞ս կհամոզես քո ընկերոջը, որ երգի այդ տեսակը իսկապես գեղեցիկ է ու հաճելի:*

ԿԱՐԴԱ՛Ե ԵՎ ՀԻՇԻ՛Ր

Ժողովրդական երգի բառերի և երաժշտության հեղինակը ինքը ժողովուրդն է:

Այդ երգերը նվիրված են աշխատանքին, հայրենիքին, բնությանը և այլն:

«Ժողովուրդն է ամենամեծ ստեղծագործողը, գնացե՛ք և սովորե՛ք նրանից»:

Կոմիտաս

ԳՆԱՀԱՏՈՒՄ

1. *Թող ընկերդ կատարի «Արև՛, արև՛» երգը: Հայտնի՛ր քո կարծիքը նրա կատարման վերաբերյալ: Նա էլ իր կարծիքը թող հայտնի քո կատարման վերաբերյալ:*

ԿԱՏԱՐՈՒՄ

Ուսուցչի օգնությամբ սովորի՛ր «Օրոր» երգը:

ՕՐՈՐ

Հայկական ժողովրդական երգ



ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *«Օրոր» երգին համապատասխան կատարի՛ր ձեռքերի և մարմնի շարժումներ:*

2. *Այս երգը ի՞նչ տրամադրություն է ստեղծում քո մեջ:*

ՊԱՐ

Պար
Պարերգ
Կատակ պար

Տեմպ

Պարը արվեստի տեսակ է:

Այն կատարվում է հիմնականում երաժշտության ուղեկցությամբ: Պարային շարժումները պետք է լինեն համահունչ երաժշտության ռիթմին: Պարային ռիթմիկ շարժումները սովորաբար ունենում են որոշակի հաջորդականություն:

Կատակ պարը պարի տեսակ է:
Տեմպը երաժշտության կատարման արագությունն է:

Այն կարող է լինել արագ, դանդաղ կամ չափավոր: Միևնույն երաժշտությունը կարելի է կատարել տարբեր տեմպերով:

ԲԱՌԱՊԱՇԱՐ

1. ***Պար, տեմպ*** *բառերը ճիշտ գործածի՛ր տրված նախադասությունների մեջ: Գրի՛ առ տետրումդ:*

- Մեր դպրոցում գործում է ..... խմբակ:
- Աշակերտները շարվեցին պարեղանակի ..... համահունչ:

ՈՒՆԿՆԴՐՈՒՄ

Ունկնդրելիս ուշադրությո՛ւն դարձրու երաժշտության ռիթմին ու տեմպին:

ՇՈՒՇԻԿԻ
Երաժշտ.՝ Կոմիտասի

ԾԵՐՈՒՆԻՆԵՐԻ ՊԱՐԸ
Երաժշտ.՝ Արամ Խաչատրյանի

ՃԱՆԱՉԻ՛Ր ԵՎ ՀԻՇԻ՛Ր

Արամ Խաչատրյանը անվանի հայ կոմպոզիտոր է: Նրա երաժշտությունը հնչում է աշխարհի տարբեր երկրներում: Նա է հեղինակը «Գայանե» և «Սպարտակ» բալետների: Ա. Խաչատրյանի արձանը Ալ. Սպենդիարյանի անվան օպերային թատրոնի շենքի դիմաց է: Նրա տուն–թանգարանը ևս Երևանում է:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Ո՞ր պարային երաժշտության ներքո ցանկություն ունեցար պարելու:*

2. *Խոսի՛ր «Շուշիկի» պարի տեմպի մասին:*

3. *Խոսի՛ր «Ծերունիների պարի» տեմպի մասին:*

ԴԻՏՈՒՄ

Դիտի՛ր «Շուշիկի» և «Ծերունիների պարը» պարային կատարումները:

1. *Ցո՛ւյց տուր, թե ինչ պարային շարժումներ կարող ես կատարել «Շուշիկի» պարային երաժշտության ներքո:*

2. *Ցո՛ւյց տուր, թե ինչ պարային շարժումներ կարող ես կատարել «Ծերունիների պարը» երաժշտության ներքո:*

3. *Համեմատի՛ր «Շուշիկի» և «Ծերունիների պարը» ստեղծագործությունները: Գործածի՛ր* ***տեմպ***, ***արագ***, ***դանդաղ***, ***չափավոր*** *բառերը:*

ՆԱԽՇՈ՛ՒՆ ԿԱՔԱՎ, ԿԱՔԱՎԻ՛Կ

Հայկական ժողովրդական պարերգ

«Նախշո՛ւն կաքավ, կաքավի՛կ» պարերգը կատարի՛ր արտահայտիչ, գեղեցիկ ձայնով: Զուգահեռ կատարի՛ր պարային շարժումներ: Ուշադրությո՛ւն դարձրու երաժշտության տեմպին և ռիթմին:

ՆԱԽՇՈ՛ՒՆ ԿԱՔԱՎ, ԿԱՔԱՎԻ՛Կ



ՆԱԽՇՈՒՆ ԿԱՔԱՎ, ԿԱՔԱՎԻԿ

Ժողովրդական պարերգ

Նախշուն կաքավ, կաքավիկ,
Կարմրատոտիկ կաքավիկ:

Լուսնակը՝ սարի տակին,
Մամուռը՝ քարի տակին,
Կաքավիկ կանգնե քարին,
Ձեն կուտա ձագուկներին:

Նախշուն կաքավ, կաքավիկ,
Կարմրատոտիկ կաքավիկ:

Լուսնակ, դու կամաց գնա,
Մեր տան վերևով գնա,
Կաքավիկին որ տեսնես,
Բարև տուր, անցիր գնա:

Նախշուն կաքավ, կաքավիկ,
Կարմրատոտիկ կաքավիկ:

ՍՏԵՂԾՈՒՄ

1. *Կարդա՛ «Նախշուն կաքավ, կաքավի՛կ» պարերգի բառերը, ապա երգի՛ր:*

2. *Ունկնդրելով երգը՝ փորձի՛ր կաքավիկին նկարել:*

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԽՈՍՔ

1. *Մեկ–երկու նախադասությամբ ընկերներիդ համոզի՛ր, որ պարը երաժշտության տարածված տեսակներից է:*

ԳՆԱՀԱՏՈՒՄ

1. *Ունկնդրի՛ր «Նախշո՛ւն կաքավ, կաքավի՛կ» պարերգի կատարումը ընկերոջդ կողմից: Հայտնի՛ր քո կարծիքը կատարման վերաբերյալ: Թող նա էլ իր կարծիքը հայտնի քո կատարման վերաբերյալ:*



ՊԱՐԵՐԳ

Պարերգ

Տեմբր
Դիսկանտ
Սոպրանո

Երբեմն պարին ուղեկցում է երգը: Պարի այդ տեսակը անվանում են ***պարերգ***:

Պարերգերը կարող են լինել արագ, դանդաղ, չափավոր:

Յուրաքանչյուր մարդ ունի իր ձայնի տեսակն ու երանգը: Երաժշտության մեջ դա անվանում են ***տեմբր՝ ձայներանգ***: Տեմբրը կարող է լինել խուլ, հնչեղ, հստակ և այլն:

Ընդունված է մանկական բարձր ձայնը անվանել ***դիսկանտ*** կամ ***սոպրանո***: Տղաների ամենացածր ու թավ ձայնը ***բաս*** է:

ԲԱՌԱՊԱՇԱՐ

1. *Պարերգ, տեմբր բառերը ճիշտ գործածի՛ր տրված նախադասությունների մեջ: Գրի՛ առ տետրումդ:*
   - Տոնակատարության ժամանակ հնչում էին ժողովրդական ..... :
   - Հանդիսատեսին հիացրել էր երգչի ..... :

ՈՒՆԿՆԴՐՈՒՄ

ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՊԱՐԸ

Երաժշտ.՝ Ալ. Սպենդիարյանի
Հատված «Ալմաստ» օպերայից

ԱՐՁՈՒԿՆԵՐԻ ՊԱՐԸ

Երաժշտ.՝ Արեգ Լուսինյանի

1. *Այս երկու պարերից ո՞րն էր ավելի արագ, ո՞րը՝ դանդաղ: Ինչո՞վ դա կբացատրես:*

2. *Ի՞նչ տրամադրություն քեզ հաղորդեցին այս պարերը:*

3. *Այս պարերի ռիթմին համահունչ կատարի՛ր պարային շարժումներ:*

ՃԱՆԱՉԻ՛Ր ԵՎ ՀԻՇԻ՛Ր

Ալեքսանդր Սպենդիարյանը նշանավոր հայ կոմպոզիտոր է: Ստեղծագործել է մանուկ հասակից: Նրա ամենահայտնի գործը «Ալմաստ» օպերան է: Ալ. Սպենդիարյանի անունով է կոչվում Երևանի օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնը: Երևանում է նաև նրա տուն–թանգարանը:

ԿԱՏԱՐՈՒՄ

ՀՈՊԱ ՁԱՐԿԵ՛ ՈՒ ՔԵԼԵ՛

Հայկական ժողովրդական պարերգ

Սովորաբար պարերգերը կատարում են խմբով՝ ձեռք ձեռքի բռնած և կիսաշրջան կազմած կամ ուղիղ գծով:

1. *Երգը կատարի՛ր գեղեցիկ ձայնով և արտահայտիչ:*

2. *Նախ սովորի՛ր երգել, ապա՝ միաժամանակ երգել ու պարել:*

ՀՈՊԱ ՁԱՐԿԵ՛ ՈՒ ՔԵԼԵ՛



ՀՈՊԱ ՁԱՐԿԵ՛ ՈՒ ՔԵԼԵ՛

Ժողովրդական պարերգ

Կուժն առա, գացի աղբյուր,
Վա՛յ, լե՛, լե՛, ջա՛ն, լե՛, լե՛,
Լցրեցի կժով պաղ ջուր,
Հոպա զարկե՛ ու քելե՛:

2 անգամ

Սարեն իջավ զույգ աղջիկ,
Վայ, լե՛, լե՛, ջա՛ն, լե՛, լե՛,
Զույգի գոգնոցն է լաստիկ,
Հոպա զարկե՛ ու քելե՛:

2 անգամ

Զուր կուգա բարձր սարեն,
Վայ, լե՛, լե՛, ջա՛ն, լե՛, լե՛,
Կթափվի մարմար քարեն,
Հոպա զարկե՛ ու քելե՛:

2 անգամ

ՍՏԵՂԾՈՒՄ

1. *Պարերին նվագակցի՛ր բնական նվագարան-ներով կամ հարվածային նվագարաններով:*

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԽՈՍՔ

1. *Փորձի՛ր համոզել ընկերներիդ, որ պարերգը կարող է փոխել նրա տրամադրությունը:*

ԳՆԱՀԱՏՈՒՄ

1. *Պարի՛ր «Հոպա զարկե՛ ու քելե՛» պարերգի ներքո: Լսի՛ր դասընկերներիդ կարծիքը քո կատարման վերաբերյալ: Դո՛ւ էլ հայտնիր քո կարծիքը նրանց կատարման վերաբերյալ:*

ՔԱՅԼԵՐԳ

Քայլերգ

Պաուզա

Քայլերգը երաժշտության տեսակ է:

Քայլերգին հատուկ է համաչափ տեմպը և հստակ ռիթմը:

ԲԱՌԱՊԱՇԱՐ

1. *Կազմի՛ր երկուական բառ* ***քայլ*** *և* ***երգ*** *բառերով: Գրի՛ առ տետրումդ:*

ՈՒՆԿՆԴՐՈՒՄ

ՓԱՅՏԵ ՁԻՆՎՈՐՆԵՐԻ ՔԱՅԼԵՐԳԸ

Երաժշտ.՝ Պյոտր Չայկովսկու

ՔԱՅԼԵՐԳ

Երաժշտ.՝ Ալ. Սպենդիարյանի
Հատված «Ալմաստ» օպերայից

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Արդյո՞ք այս ստեղծագործությունները լսելիս նկատեցիր կրկնվող համաչափ զարկեր:*

2. *Նորից ունկնդրիր: Փորձիր քայլել դրանց ռիթմին ու տեմպին համապատասխան:*

ՃԱՆԱՉԻՐ ԵՎ ՀԻՇԻՐ

Պյոտր Իլյիչ Չայկովսկին ռուս մեծ կոմպոզիտոր է: Հեղինակէ օպերաների, սիմֆոնիաների, բալետների: Երևի թե լսել ես «Շչելկունչիկ» բալետի մասին կամ ներկա ես եղել բալետին: Երևանում Չայկովսկու անունով երաժշտական դպրոց և փողոց կա:

ԿԱՑԱՐՈՒՄ

ՈՒՂԻՂ ԿԱՐԳՈՎ

Երաժշտ.՝ Ռոբերտ Պետրոսյանի

Ունկնդրիր քայլերգը: Ուշադրությունդարձրու երաժշտության ռիթմին: Այն ունի դադարներ: Այդ դադարները երաժշտության մեջ անվանում են ***պաուզա***:

ՈՒՂԻՂ ԿԱՐԳՈՎ



ՈՒՂԻՂ ԿԱՐԳՈՎ

Խոսք՝ Ղ. Աղայանի
Երաժշտ.՝ Ռ. Պետրոսյանի

Ուղիղ կարգով
Կանգնենք շարքով,
Շարժվենք վաշտ–վաշտ
Մենք դեպի դաշտ:

Կրկներգ Մեկ, երկու,
Մին ձախ, մին աջ,
Մեկ, երկու,
Դեպ առաջ:
Մեկ, երկու,
Մին ձախ, մին աջ,
Քայլենք դեպ առաջ:



Շարժվենք, շարժվենք,
Լինենք հաջորդ,
Լինենք հաջորդ
Կուռ բանակին:

Կրկներգ Մեկ, երկու...

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Նորից ունկնդրիր և միաժամանակ քայլիր: Կարող ես ծափով կամ թմբուկով նվագակցել հնչող երաժշտությանը:*

ՍՏԵՂԾՈՒՄ

1. *Ստեղծիր քայլերգային բովանդակություն ունեցող քառյակ: Ծափիր ռիթմը:*

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԽՈՍՔ

1. *Ընկերոջդ հետ խոսիր այն մասին, թե հատկապես երբ է հնչում քայլերգը:*

ԳՆԱՀԱՏՈՒՄ

1. *Քայլերգին համապատասխան ռիթմով ու տեմպով քայլիր: Լսիր դասընկերներիդ կարծիքը քո քայլքի մասին: Դո՛ւ էլ հայտնիր քո կարծիքը նրանց քայլքի մասին:*

ՔԱՅԼԵՐԳԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Քայլերգ
Զինվորական քայլերգ
Մարզական քայլերգ
Մանկական քայլերգ

Քայլերգի երաժշտությունը սովորաբար կատարում են փողային և հարվածային նվագարաններով:

ԲԱՌԱՊԱՇԱՐ

1. ***Աշխույժ***, ***թեթև***, ***խրոխտ*** *բառերը ճիշտ գործածի՛ր տրված նախադասությունների մեջ: Գրի՛ առ տետրումդ:*

- Մարզական քայլերգը հնչում է ..... տեմպով:
- Մանկական քայլերգը հնչում է ..... տեմպով:
- Զինվորական քայլերգը հնչում է ..... տեմպով:

ՈՒՆԿՆԴՐՈՒՄ

ՔԱՅԼԵՐԳԻ ԵՐԵՔ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Երաժշտ.՝ Դմիտրի Կաբալևսկու

Այս ***քայլերգերը*** մեկը մյուսից տարբերվում են իրենց ***ռիթմով***, ***տեմպով*** և ***հանդիսավորությամբ***: Դրանք կոմպոզիտորը բաժանել է երեք տեսակի:

Զինվորական քայլերգ

Մարզական քայլերգ

Մանկական քայլերգ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Քայլի՛ր և որոշի՛ր, թե որ քայլերգի երաժշտությունը որ նկարին է համապատասխանում:*

2. *Բնական նվագարաններով նվագակցի՛ր «Քայլերգի երեք տեսակներ»-ին:*

ՃԱՆԱՉԻ՛Ր ԵՎ ՀԻՇԻ՛Ր

Դմիտրի Կաբալևսկին ռուս կոմպոզիտոր է, դիրիժոր և դաշնակահար: Գրել է օպերաներ, օպերետներ, երաժշտություն ջութակի և թավջութակի համար:

Յուրաքանչյուր երգ բաղկացած է կարճ և երկար տևողության հնչյուններից:

Երաժշտական հնչյունը գրի ենք առնում հատուկ նշանի օգնությամբ, որը կոչվում է ***նոտա***:

Երկար տևողությամբ հնչյունը գրվում է այսպես՝ ♩ : Կատարվում է ***քայլ*** բառով կամ ***թա*** վանկով:

Կարճ տևողությամբ հնչյունները գրվում են այսպես՝ ♪♪: Կատարվում են ***վազել*** բառով կամ ***թի–թի*** վանկերով:

ԿԱՏԱՐՈՒՄ

Ուսուցչի օգնությամբ սովորի՛ր «Եկե՛ք մրցենք» հայկական ժողովրդական երգը և ծանոթացի՛ր նոտայի գրությանը:

ԵԿԵ՛Ք ՄՐՑԵՆՔ



ԵԿԵ՛Ք ՄՐՑԵՆՔ

Խոսք՝ Ն. Միքայելյանի
ժողովրդական երգ

Մենք քայլում ենք
Ու երգում ենք,
Միշտ ուսման մեջ
Առջևում ենք:

Դո՛ւք էլ, դո՛ւք էլ,
Հո ծույլիկ չեք,
Դե վազե՛ք, որ
Մեզ հասնեք:





Ջարկը երաժշտության ռիթմը բաժանում է հավասար մասերի:

Շեշտը ցույց է տալիս երաժշտության ուժեղ և թույլ հնչյունների հնչողությունը:

Մի շեշտից մյուս շեշտն ընկած հատվածը անվանում են ***տակտ:***

Տակտերը մեկը մյուսից բաժանվում են տակտի գծերով:



Յուրաքանչյուր տակտի մեջ կա երկու զարկ՝ մեկը շեշտված և գունավոր, մյուսը՝ չշեշտված և անգույն:



ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԽՈՍՔ

1. *Երկու–երեք նախադասությամբ տետրումդ շարադրի՛ր քո մտքերը հայրենիքի մասին:*

ՀԱՅՐԵՆԻՔ

Հայկական ժողովրդական երգ

ՀԱՅՐԵՆԻՔ



ՀԱՅՐԵՆԻՔ

Խոսք՝ Ռ. Ղարիբյանի
ժողովրդական երգ

Սարերդ՝ բարձրիկ,
Դաշտերդ՝ անծայր,
Ջրերդ՝ քաղցրիկ,
Արևդ՝ պայծառ:

Դու տվել ես մեզ
Ծաղիկ ու ծիծաղ,
Երգ ու խնդություն,
Թե՛ ուսում, թե՛ խաղ:

Դու տվել ես մեզ
Թռիչքի թևեր,
Որ մենք բարձրանանք
Աստղերից էլ վեր:

*«Հայրենիք» երգի յուրաքանչյուր տակտ ունի երկու զարկ, այսինքն՝ երկու մաս: Դա նշանակում է, որ երգն ունի երկմասանի չափ: **Չափը** գրվում է 2 թվանշանով և դրվում է սո–ի բանալուց հետո:*

ՔՆՆԱՐԿՈՒՄ

1. *Ո՞րն է ձեր հայրենիքը: Կարո՞ղ եք պատմել ձեր հայրենիքի մասին:*

2. *Ի՞նչ եք պատկերացնում «Հայրենիք» երգը ունկնդրելիս:*

ԿԱՏԱՐՈՒՄ

ԲԱՐՁՐԻԿ ՀԱՅԱՍՏԱՆ

Երաժշտ.՝ Արեգ Լուսինյանի

ԲԱՐՁՐԻԿ ՀԱՅԱՍՏԱՆ



ԲԱՐՁՐԻԿ ՀԱՅԱՍՏԱՆ

Խոսք՝ Ն. Միքայելյանի
Երաժշտ.՝ Ա. Լուսինյանի

Կա մի բարձրիկ Հայաստան,
Մի գեղեցիկ Հայաստան,
Սեգ–սեգ սարեր նա ունի,
Պաղ–պաղ ջրեր հայրենի:

Լույս ժպիտն իր աչքերում՝ *Կրկներգ*
Նա գարուն է մեզ բերում,
Շունչ է տալիս մեր կյանքին,
Այգ է վառում մեր ճամփին:

Կա մի քաղցրիկ Հայաստան,
Կա մի ծաղկած Հայաստան,
Դար ու դար է նա անցել
Ու նոր կյանքով նորացել:

Լույս ժպիտն իր աչքերում... *Կրկներգ*

ԳՆԱՀԱՏՈՒՄ

1. *Երգը կատարե՛ք ռիթմական նվագակցությամբ: Գնահատե՛ք մեկդ մյուսի կատարումը:*



ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՀԱՆԴԵՍ ԵՆ ԳԱԼԻՍ ՄԻԱՍԻՆ

Երգ
Պար
Քայլերգ

Երաժշտության մեջ շատ հաճախ *երգը*, *պարը*, *քայլերգը* հանդես են գալիս միասին:

ՈՒՆԿՆԴՐՈՒՄ

ՄԱՆՈՒԿՆ ՈՒ ՋՈՒՐԸ

Երաժշտ.՝ Ռոմանոս Մելիքյանի

ՎԱՐԴԱԳՈՒՅՆ ԱՂՋԻԿՆԵՐԻ ՊԱՐԸ

Երաժշտ.՝ Արամ Խաչատրյանի
Հատված «Գայանե» բալետից

«Մանուկն ու ջուրը» երգի առաջին մասն ունի *դանդաղ տեմպ*, իսկ երկրորդ մասը՝ *արագ*:

ՃԱՆԱՉԻ՛Ր ԵՎ ՀԻՇԻ՛Ր

Մարտին Մազմանյանը հայ կոմպոզիտոր է, խմբավար, մանկավարժ: Գրել է խմբերգեր, ռոմանսներ, երգեր մանուկների համար: Նա մանկական «Ճուտիկ» օպերայի հեղինակն է:

ԿԱՏԱՐՈՒՄ

ԱՔԼՈՐԻԿԻ, ԹԽՍԻ ԵՎ ՃՈՒՏԻԿՆԵՐԻ ԵՐԳԸ

Երաժշտ.՝ Մարտին Մազմանյանի

ԱՔԼՈՐԻԿԻ, ԹԽՍԻ ԵՎ ՃՈՒՏԻԿՆԵՐԻ ԵՐԳԸ



ԱՔԼՈՐԻԿԻ, ԹԽՍԻ ԵՎ ՃՈՒՏԻԿՆԵՐԻ ԵՐԳԸ

Խոսք՝ Հ. Աղաբաբի
Երաժշտ.՝ Մ. Մազմանյանի

Աքլորիկ — Ա՛յ էստեղ է
Ճուտ Մարին՝
Ապավինած
Չամբարին:

Թուխս — Բարո՛վ, բարո՛վ,
Ճուտի՛կ ջան:

Ճուտիկներ — Բարո՛վ, բարո՛վ,
Քուրի՛կ ջան:

Միասին — Ո՞ւր գնացիր՝
Հետ չեկար,
Էդ ի՞նչ օրի
Դու ընկար:



2 անգամ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Կատարի՛ր «Աքլորիկի, թխսի և ճուտիկների երգը»: Ե՛վ քո քայլքը, և՛ պարային շարժումները պետք է բխեն երգի իմաստից: Այդպես պետք է նկատելի լինի ճուտիկներին ուղղված խրատական խոսքը:*

2. *«Աքլորիկի, թխսի և ճուտիկների երգ»–ում երաժշտության ո՞ր տեսակներն են հանդես գալիս միասին:*

ՋԱ՛Ն ԳԱՌՆՈՒԿ

Հայկական ժողովրդական երգ

ՋԱ՛Ն ԳԱՌՆՈՒԿ



ՋԱ՛Ն ԳԱՌՆՈՒԿ

Ժողովրդական երգ

Կապեմ վզիդ զիլ զանգակ,
Դե՛, զընգլ, զընգլ, զընգլ, ջա՛ն գառնուկ,
Օրը տաք է, արեգակ,
Դե՛, զընգլ, զընգլ, զընգլ, ջա՛ն գառնուկ:

Արտի բոլոր՝ կանաչ խոտ,
Իմ սիրո՛ւն գառնուկ,
Արի՛ տանեմ քեզ արոտ,
Իմ սիրո՛ւն գառնուկ:

Տանեմ արոտ՝ կշտանաս,
Դե՛, զընգլ, զընգլ, զընգլ, ջա՛ն գառնուկ,
Խոտ ուտես, շուտ մեծանաս,
Դե՛, զընգլ, զընգլ, զընգլ, ջա՛ն գառնուկ:

Կանաչ դաշտի մեջ խաղաս,
Իմ սիրո՛ւն գառնուկ,
Երեկոյան տուն դառնաս,
Իմ սիրո՛ւն գառնուկ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *«Ջա՛ն գառնուկ» երգում երաժշտության ո՞ր տեսակներն են հանդես գալիս միասին:*

2. *Երգը կատարի՛ր ռիթմական նվագակցությամբ:*

3. *Երգը կատարի՛ր այնպես, որ հնչի մեկ որպես քայլերգ, մեկ որպես պարերգ:*

ՍՏԵՂԾՈՒՄ

1. *Հորինի՛ր այնպիսի երգ, որի հերոսները լինեն կենդանիներ:*

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԽՈՍՔ

1. *Ի՞նչ նմանություն ու տարբերություն ես նկատում «Աքլորիկի, թխսի և ճուտիկների երգը» և «Ձա՛ն գառնուկ» երգերի միջև: Ներկայացրո՛ւ դասընկերներիդ:*

ԳՆԱՀԱՏՈՒՄ

1. *Կատարի՛ր սովորածդ երգերից մեկը: Թող դասընկերներդ հայտնեն իրենց կարծիքը քո կատարման վերաբերյալ: Դո՛ւ էլ հայտնիր քո կարծիքը նրանց կատարումների վերաբերյալ:*

Նոտաների օգնությամբ գրի ենք առնում ոչ միայն երաժշտական հնչյունների տևողությունները, այլև հնչյունների բարձրությունները: Դրանք գրվում են հնգագծի կամ նոտագծի ցածր, միջին և բարձր գծերի վրա կամ գծարանքներում:



Երաժշտական հնչյունների բարձրությունների նշանակման համար կիրառվում են վանկային անվանումներ: Ահա դրանք.

դո, րե, մի, ֆա, սո, լա, սի

Հնգագծի սկզբում դրվող հատուկ նշանը կոչվում է **բանալի**:

Նոտագրության մեջ օգտագործվում են մի շարք բանալիներ, որոնցից մենք կծանոթանանք ***սո*** բանալիին:

Քանի որ ***սո*** բանալիի վերջավորությունը փաթաթվում է հնգագծի երկրորդ գծին, դա ցույց է տալիս, որ երկրորդ գծի վրա գրվում է ***սո*** նոտան: Մյուս նոտաների տեղը որոշվում է ***սո*** նոտայի համեմատությամբ, օրինակ՝ ***սո***–ից ներքև տեղադրված ***ֆա***–ն գրվում է առաջին և երկրորդ գծերի միջև, իսկ ***մի***–ն՝ առաջին գծի վրա, և այլն:



ԳԱՑԵ՛Ք ՏԵՍԵՔ

Հայկական ժողովրդական երգ

ԳԱՑԵ՛Ք ՏԵՍԵՔ

ժողովրդական երգ

— Գացե՞ք տեսեք՝ ո՞վ ա կերել էծը:
Գացին տեսան՝ գելն ա կերել էծը:
Գելն ու էծը,
Էծն ու գելը,
Ձեզ՝ Բարեկենդան,
Մեզ՝ բարի Զատիկ:
— Գացե՞ք տեսեք՝ ո՞վ ա կերել գելը:
Գացին տեսան՝ արջն ա կերել գելը:
Արջն ու գելը,
Գելն ու էծը,
Ձեզ՝ Բարեկենդան,
Մեզ՝ բարի Զատիկ:
— Գացե՞ք տեսեք՝ ո՞վ ա կերել արջը:
Գացին տեսան՝ թուրն ա կերել արջը:
Թուրն ու արջը,
Արջն ու գելը,
Գելն ու էծը,
Ձեզ՝ Բարեկենդան,
Մեզ՝ բարի Զատիկ:

«Գացե՛ք տեսեք» երգի ***մեղեդին*** ինգագծի վրա նոտաներով կունենա այսպիսի տեսք.



Մեղեդին երգի երաժշտությունն է առանց խոսքի:

Երգի մեղեդին ինգագծի վրա գրված է տարբեր տևողության նոտաներով: Արագ տևողության նոտաները գրվում են այսպես՝ ♪♪՝ իրար միացած գծիկով: Այն երգում ենք ***թի–թի*** վանկերով: Դանդաղ տևողության նոտան գրվում է այսպես՝ ♩, և երգում ենք ***թա*** վանկով: Իսկ ավելի երկար տևողության նոտան գրվում է մեջը դատարկ կլորակով և գծիկով՝ 𝅗𝅥, երգում ենք երկարաձիգ՝ ***թա–ա*** վանկով՝

♩ + ♩ = 𝅗𝅥 :
թա + թա թա–ա

Մի, ***ֆա***, ***սո*** հնչյունները գրված են տարբեր տևողության նոտաներով: Փորձի՛ր այն երգել դանդաղ և ավելի դանդաղ տևողության ռիթմի վանկերով՝ թա–ա:



Տեմպը գրվում է հնգագծի սկզբում՝ ***դանդաղ***, ***միջին*** և ***արագ*** բառերով:

ՀԱՎԻ ՃԻՎ
(ԽԱՂԵՐԳ)



Մեղեդու հնչյունների բարձրությունը երգում ենք նաև ***մի***, ***ֆա***, ***սո*** ձեռքի նշաններով:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Փորձի՛ր ***մի***, ***ֆա***, ***սո*** ձայնաստիճանները երգել ձեռքի նշաններով:



Ուսուցչի օգնությամբ երգի՛ր «Շվի» հայկական ժողովրդական երգը:



ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Ծա՛փ տուր «Շվի» երգի մեղեդու ռիթմը և երգի՛ր ձայնաստիճանների վանկային անուններով:



«Շվի» երգի մեղեդու նոտաներն են՝ ***մի***, ***բե դո***: Բե-ն գրվում է հնգագծի առաջին գծի տակ: Դո-ն գրվում է հնգագծից ներքև՝ առաջին օժանդակ գծիկի վրա:



Ռե ձայնաստիճանի ձեռքի նշանը սա է.



Դո ձայնաստիճանի ձեռքի նշանը սա է.

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Երգի՛ր նոտաներով և ցո՛ւյց տուր ձեռքի նշաններով:



ՍԱԳԻԿ



ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Երգի՛ր ձեռքի նշաններով, ապա՝ նոտաներով:



ԵՆԹԱԹԵՄԱ 1

ՈՒՐ ԵՆ ՄԵԶ ՏԱՆՈՒՄ ԱՅԴ ԺԱՆՐԵՐԸ

Այս թեմային ծանոթանալով՝ դու կբացահայտես երաժշտության երեք մեծ և բարդ ժանրերը՝ օպերան, բալետը, սիմֆոնիան: Կհամոզվես, որ դրանց հիմքում երաժշտության այդ երեք պարզ տեսակներն են:

ՕՊԵՐԱ

Օպերա
Բալետ
Սիմֆոնիա

Օպերան, *բալետը* և *սիմֆոնիան* երաժշտական ժանրեր են:

Օպերան երաժշտական ներկայացում է, որում կատարողները իրար հետ հաղորդակցվում են երգելով:

Օպերայում հանդես են գալիս երգիչները, երգչախումբը, պարողները և սիմֆոնիկ նվագախումբը:

ՈՒՆԿՆԴՐՈՒՄ

ԱՔԼՈՐԻԿԻ, ԹԽՍԻ ԵՎ ՃՈՒՏԻԿՆԵՐԻ ԵՐԳԸ

Երաժշտ.՝ Մարտին Մազմանյանի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Կրկի՛ն ունկնդրիր, ապա ձայնակցի՛ր օպերայում հնչող «Աքլորիկի, թխսի և ճուտիկների երգ»–ի կատարմանը:*

2. *Քեզ տպավորե՞ց երգը: Կցանկանա՞ս դիտել ամբողջ օպերան:*

ՍՏԵՂԾՈՒՄ

1. *Ունկնդրումից հետո տետրումդ նկարի՛ր նկար՝ ըստ երգի բովանդակության: Ապա երեք–չորս նախադասությամբ շարադրի՛ր քո մտքերը նկարիդ մասին:*

ԿԱՐԴԱ՛Ր ԵՎ ՀԻՇԻ՛Ր

Առաջին հայկական օպերան «Արշակ երկրորդ»–ն է: Օպերան գրել է կոմպոզիտոր Տիգրան Չուխաջյանը ավելի քան 150 տարի առաջ: «Արշակ երկրորդ»–ը բեմադրվում է մինչ օրս:

Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի շենքը Երևանում

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Ո՞րն է հայկական առաջին օպերան, ո՞վ է հեղինակը:*

2. *Ո՞ւմ անունով է կոչվում Երևանի օպերայի և բալետի թատրոնի շենքը:*

3. *Իսկ դու գիտե՞ս, թե ով է Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի ու բալետի թատրոնի շենքի ճարտարապետը:*

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԽՈՍՔ

1. *Մեծահասակների օգնությամբ համացանցում գտի՛ր մանկական օպերա և ունկնդրի՛ր: Իսկ այս հղումով կգտնես երկու մանկական օպերա:*

ԳՆԱՀԱՏՈՒՄ

1. *Դասից ի՞նչ գիտելիքներ քաղեցիր: Պատմի՛ր ընկերներիդ: Ապա թող նրանք պատմեն իրենց սովորածը: Այնուհետև փոխադարձ գնահատե՛ք միմյանց:*

ԱՅՍՏԵՂ ԿԱՐՈՂ ԵՍ ԿԱՐԴԱԼ «ՃՈՒՏԻԿ» ՕՊԵՐԱՅԻ ՍՅՈՒԺԵՆ

Թուխսն ու իր ճուտիկները քուջուջ են անում բակում: Հետո հեռանում են: Բայց ճուտիկներից մեկը, որ չէր լսել մոր խրատը, շատ էր կերել, հիվանդանում է ու հետ է մնում: Նա դողում է ու լաց լինում: Կատուն տեսնում է նրան, ուրախանում, որ լավ որս է գտել: Սակայն շունը, իր տնակի մեջ նստած, հետևում էր տեսարանին: Նա գալիս է, շոյում ճուտիկին և տանում իր տնակի մոտ: Ապա աքլորիկը ծուղրուղու է կանչում, նշան տալիս մայր հավիկին, որ իր ճուտիկը գտնվել է: Բակում մեծ ուրախություն է լինում, բոլորը երգում են և պարում:

ԲԱԼԵՏ

Բալետ
Պար

Բալետը երաժշտական–պարային ներկայացում է:

Դերակատարները իրար հետ հաղորդակցվում են պարային շարժումների միջոցով: Նվագակցում է սիմֆոնիկ նվագախումբը:

ՈՒՆԿՆԴՐՈՒՄ

ՎԱՐԴԱԳՈՒՅՆ ԱՂՋԻԿՆԵՐԻ ՊԱՐԸ

Երաժշտ.՝ Արամ Խաչատրյանի
Հատված «Գայանե» բալետից

ԱՂՋԻԿՆԵՐԻ ՊԱՐԸ

Երաժշտ.՝ Արամ Խաչատրյանի
Հատված «Գայանե» բալետից

1. *Համեմատի՛ր երկու ստեղծագործությունները: Ո՞րն էր քեզ համար առավել տպավորիչ:*

2. *Դիտի՛ր «Աղջիկների պարը» «Գայանե» բալետից: Քո տպավորություններով կիսվի՛ր դասընկերներիդ հետ:*

ԿԱՐԴԱ՛Ե ԵՎ ՀԻՇԻ՛Ր

Առաջին հայկական բալետը «Գայանե»–ն է: Այն գրել է Արամ Խաչատրյանը: Բալետի հիմքում հայկական ժողովրդական պարն է:

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԽՈՍՔ

1. *Մի քանի նախադասությամբ ներկայացրո՛ւ, թե ինչը քեզ տպավորեց «Գայանե» բալետի քո ունկնդրած հատվածներից:*

ՍՏԵՂԾՈՒՄ

1. *Հորինի՛ր մեղեդի, որի ներքո աղջիկները կարող են գեղեցիկ պարել:*

ԳՆԱՀԱՏՈՒՄ

1. *Դասից ի՞նչ գիտելիքներ քաղեցիր: Պատմի՛ր ընկերներիդ: Ապա թող նրանք պատմեն իրենց սովորածը: Այնուհետև փոխադարձ գնահատե՛ք միմյանց:*

ՍԻՄՖՈՆԻԱ

Սիմֆոնիա
Դիրիժոր

Կան ծավալուն երաժշտական ստեղծագործություններ, որոնք կատարվում են մեծ նվագախմբով: Այդպիսի ստեղծագործությունները ընդունված է անվանել ***սիմֆոնիա***, իսկ նվագախումբը՝ ***սիմֆոնիկ*** նվագախումբ: Այն ղեկավարում է դիրիժորը, որին անվանում են նաև նվագավար:

Կոմպոզիտորները հաճախ իրենց սիմֆոնիաներում օգտագործում են ժողովրդական երգեր և պարեր: Դրանք ժողովրդին սիրելի են և հարազատ:

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը

ԲԱՌԱՊԱՇԱՐ

1. ***Սիմֆոնիա*** *և* ***դիրիժոր*** *բառերը գործածի՛ր նախադասությունների մեջ:*

ՈՒՆԿՆԴՐՈՒՄ

Հատված ՊԱՏԱՆԵԿԱՆ սիմֆոնիայից

Երաժշտ.՝ Էմմա Միհրանյանի

1. *Ասա՛, թե ինչ փոփոխության է ենթարկվել «Արև՛, արև՛» ժողովրդական երգը «Պատանեկան» սիմֆոնիայում:*
2. *Կցանկանա՞ս ամբողջ սիմֆոնիան ունկնդրել:*
3. *Ի՞նչ են կոչում այն մարդուն, որը ղեկավարում է սիմֆոնիկ նվագախումբը:*

ՍՏԵՂԾՈՒՄ

1. *Ստեղծի՛ր ռիթմական նվագակցություն և նվագակցի՛ր հնչող երաժշտությանը:*

ՈՒՆԿՆԴՐՈՒՄ

ՈՒՐԱԽՈՒԹՅԱՆ ԶՈՆԵՐԳ

Հատված Իններորդ սիմֆոնիայից
Երաժշտ.՝ Լյուդվիգ վան Բեթհովենի

ՃԱՆԱՉԻ՛Ր ԵՎ ՀԻՇԻ՛Ր

Լյուդվիգ վան Բեթհովենը աշխարհահռչակ կոմպոզիտոր է: Նա վաղ տարիքից նվագել է երգեհոն, ջութակ, ֆլեյտա: Երիտասարդ տարիքում նա կորցրել է լսողությունը, սակայն շարունակել է ստեղծագործել: Գրել է բալետ, օպերա, սիմֆոնիաներ և սոնատներ: Երևի լսել ես նրա **Իններորդ** սիմֆոնիայի մասին:

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԽՈՍՔ

1. *«Պատանեկան» սիմֆոնիան քեզ տպավորե՞ց: Ի՞նչ էիր երևակայությանդ մեջ պատկերացնում այն լսելիս: Ներկայացրո՛ւ դասընկերներիդ:*

ԳՆԱՀԱՏՈՒՄ

1. *Դասից ի՞նչ գիտելիքներ քաղեցիր: Պատմի՛ր ընկերներիդ: Ապա թող նրանք պատմեն իրենց սովորածը: Այնուհետև փոխադարձ գնահատե՛ք միմյանց:*

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Նոտաներով սովորիր «Անձրև, անձրև» երգը:

ԱՆՁՐԵ՛Վ, ԱՆՁՐԵ՛Վ



Օրը մթնել, ամպել ա,
Տես, երկինքը թխպել ա, մթնել ա,
Արտերի ցորեն հացը
Խշխշալով երգ ա ասում՝ հասել ա:

ԵՐԳԸ ՕՊԵՐԱՅՈՒՄ, ԲԱԼԵՏՈՒՄ, ՍԻՄՖՈՆԻԱՅՈՒՄ

Օպերա
Բալետ
Սիմֆոնիա

ՈՒՆԿՆԴՐՈՒՄ

Հայտնի՛ր քո կարծիքը այս ստեղծագործությունների վերաբերյալ:

ԹԽՍԻ ԵՎ ԿԱՑՎԻ ԿՌԻՎԸ

Երաժշտ.՝ Մարտին Մազմանյանի
Հատված «Ճուտիկ» օպերայից

ՕՐՈՐՈՑԱՅԻՆ

Երաժշտ.՝ Արամ Խաչատրյանի
Հատված «Գայանե» բալետից

ՔԵՌԻՆ ԵԿԱՎ ՄԵՐ ԲԱԿԸ

Հայկական ժողովրդական երգ
Հնչում է Էդվարդ Միրզոյանի սիմֆոնիայում:

1. *Իսկ դու կնկատեի՞ր, որ Էդվարդ Միրզոյանի սիմֆոնիայում հնչում է «Քեռին եկավ մեր բակը» երգը:*

ՃԱՆԱՉԻ՛Ր ԵՎ ՀԻՇԻ՛Ր

Էդվարդ Միրզոյանը հայ նշանավոր կոմպոզիտոր է, մանկավարժ: Գրել է ռոմանսներ, սոնատներ, կանտատներ, սիմֆոնիա: Կոմպոզիտորը գրել է նաև երաժշտություն կինոնկարների համար:

ԿԱՏԱՐՈՒՄ

ԹԽՍԻ ԵՎ ԿԱՏՎԻ ԿՌԻՎԸ

Երաժշտ.՝ Մարտին Մազմանյանի
Հատված «Ճուտիկ» օպերայից

Երգի՛ր թեթև, գեղեցիկ ձայնով: Բառերը արտասանի՛ր պարզ, ձայնավորները երկարաձգի՛ր, իսկ բաղաձայնները արտասանի՛ր հստակ: Բառի կեսին շունչ մի՛ վերցրու:

«Թխսի և կատվի կռիվը» երգը երգի՛ր համապատասխան շարժումներով:

ԹԽՍԻ ԵՎ ԿԱՏՎԻ ԿՌԻՎԸ



ԹԽՍԻ ԵՎ ԿԱՏՎԻ ԿՌԻՎԸ

Թուխս — Կատո՛ւ, հեռո՛ւ, տո՛ւր կտամ,
Աչքիդ լույսը փուլ կտամ:
Կատու — Ա՛յ թուխս, փախի՛ր, որ բռնեմ,
Փետուրներդ կպոկեմ:
Թուխս — Կատո՛ւ, ճանկդ քեզ քաշի,
Իզուր սիրտդ մի՛ մաշի:
Կատու — Խրատ ունես՝ քեզ ասա,
Թե չէ՝ էս է, քեզ հասա:
Թուխս — Կատո՛ւ, կորի՛ր, դու ո՞վ ես,
Մի՛ ցատկոտի գժի պես:
Կատու — Մի տես, մի տես, սրանն տես,
Ես քեզ կանեմ երկու կես:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ



1. *Ստեղծի՛ր ռիթմական նվագակցություն և նվագակցի՛ր երգին:*

2. *«Ճուտիկ» մանկական օպերայից ուրիշ ի՞նչ երգ գիտես: Երգի՛ր:*

3. *Ո՞ր ստեղծագործությունն էր քեզ ավելի հոգեհարազատ: Երկու նախադասությամբ ասա՛, թե ինչու:*

ՍՏԵՂԾՈՒՄ

1. *Դասընկերներով երգը բեմականացրե՛ք և կատարե՛ք դերերով:*

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԽՈՍՔ

1. *Համեմատի՛ր «Աքլորիկի, թխսի և ճուտիկների երգը» և «Թխսի և կատվի կռիվը»:*

ԳՆԱՀԱՏՈՒՄ

1. *Կատարի՛ր «Թխսի և կատվի կռիվը» երգը: Թող ընկերներդ իրենց կարծիքը հայտնեն քո կատարման վերաբերյալ: Դո՛ւ էլ հայտնիր քո կարծիքը նրանց կատարման վերաբերյալ:*

ՊԱՐԸ ԲԱԼԵՏՈՒՄ, ՕՊԵՐԱՅՈՒՄ, ՍԻՄՖՈՆԻԱՅՈՒՄ

Պար
Օպերա
Բալետ
Սիմֆոնիա

ՈՒՆԿՆԴՐՈՒՄ

ՎԱՐԴԱԳՈՒՅՆ ԱՂՋԻԿՆԵՐԻ ՊԱՐԸ

Երաժշտ.՝ Արամ Խաչատրյանի
Հատված «Գայանե» բալետից

ՕՐՈՐՈՑԱՅԻՆ

Երաժշտ.՝ Արամ Խաչատրյանի
Հատված «Գայանե» բալետից

ԿԱՏՎԻ ԵՐԳԸ

Երաժշտ.՝ Մարտին Մազմանյանի
Հատված «Ճուտիկ» օպերայից

1. ***Բալետ, «Գայանե»*** *բառերը գործածի՛ր տրված նախադասությունների մեջ: Գրի՛ առ տետրումդ:*

- «Օրորոցային» պարը «Գայանե» ... է:
- «Վարդագույն աղջիկների պարը» ... բալետից է:

2. *Կրկի՛ն ունկնդրիր «Կատվի երգը»: Նկարի՛ր քայլող կատու:*

3. *Երկու–երեք նախադասությամբ ասա՛, թե պարերը ինչո՞վ են տարբերվում իրարից:*

ՈՒՆԿՆԴՐՈՒՄ

ՍՈՒՍԵՐՈՎ ՊԱՐԸ

Երաժշտ.՝ Արամ Խաչատրյանի
Հատված «Գայանե» բալետից

ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՊԱՐԸ

Երաժշտ.՝ Ալեքսանդր Սպենդիարյանի
Հատված «Ալմաստ» օպերայից

ՓՈՔՐԻԿ ԿԱՐԱՊՆԵՐԻ ՊԱՐԸ

Երաժշտ.՝ Պյոտր Չայկովսկու
Հատված «Կարապի լիճը» բալետից

ՍՏԵՂԾՈՒՄ

Դասընկերներիդ հետ ընտրի՛ր և բեմականացրո՛ւ ունկնդրածդ բալետներից հատվածներ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Ասա՛, թե որ երաժշտությունը որ նկարին է համապատասխանում:*

2. *Ունկնդրի՛ր և փորձի՛ր երաժշտությանը համապատասխան պարային շարժումներ կատարել:*

3. *Դասընկերներով խաղացե՛ք «Ով շուտ կպատասխանի» խաղը:*

ՀԱՆԻ՛Կ ՆԱՅ

Հայկական ժողովրդական երգ

Երգը սովորի՛ր նոտաներով:

ՀԱՆԻ՛Կ ՆԱՅ



ՀԱՆԻ՛Կ ՆԱՅ

ժողովրդական երգ



Երկինքը ամպամած ա,
Հանի՛կ նայ, նանի՛կ նայ,
Մեր այգու դուռը բաց ա,
Հանի՛կ նայ, նանի՛կ նայ:

Երկնքից թոն ա գալի,
Հանի՛կ նայ, նանի՛կ նայ,
Անձրևից այգին թաց ա,
Հանի՛կ նայ, նանի՛կ նայ:

ԿԱՐԴԱ՛Ե ԵՎ ՀԻՇԻ՛Ր

Ալ. Սպենդիարյանը «Ալմաստ» օպերան գրել է Հովի. Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի հիման վրա:

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԽՈՍՔ

1. ***«Սուսերով պարը»*** *քեզ տպավորե՞ց: Ի՞նչ էիր երևակայությանդ մեջ պատկերացնում այն լսելիս: Ներկայացրո՛ւ դասընկերներիդ:*

ԳՆԱՀԱՏՈՒՄ

1. *Կատարի՛ր «Հանի՛կ նայ» երգը: Թող դասընկերներդ հայտնեն իրենց կարծիքը քո կատարման վերաբերյալ: Դո՛ւ էլ հայտնիր քո կարծիքը նրանց կատարման վերաբերյալ:*

ՄԱՅՐԻԿԻՍ

Հայկական ժողովրդական երգ



ՄԱՅՐԻԿԻՍ

Խոսք՝ Ս. Կապուտիկյանի
Հայկական ժողովրդական երգ

Գիտեմ, բարի են, բարի
Բոլոր մայրերն աշխարհի,
Բայց աշխարհում ինձ համար
Մի աշխարհ կա ու մի մայր:

2 անգամ

Ո՞վ է ինձ կանչում, այն ո՞վ,
Մայրս՝ անուշ իր ձայնով:
Ո՞վ է ինձ ասում՝ ձագո՛ւկ,
Մայրս՝ շնչով իր տաքուկ:

2 անգամ

ՔԱՅԼԵՐԳԸ ՕՊԵՐԱՅՈՒՄ, ԲԱԼԵՏՈՒՄ, ՍԻՄՖՈՆԻԱՅՈՒՄ

ՔԱՅԼԵՐԳ
Օպերա
Բալետ
Սիմֆոնիա

Թե՛ օպերայում, թե՛ բալետում և թե՛ սիմֆոնիայում կարելի է հանդիպել քայլերգերի:

ՈՒՆԿՆԴՐՈՒՄ

ՔԱՅԼԵՐԳ

Երաժշտ.՝ Արամ Խաչատրյանի
Հատված «Գայանե» բալետից

ՔԱՅԼԵՐԳ

Երաժշտ.՝ Ալ. Սպենդիարյանի
Հատված «Ալմաստ» օպերայից

ՈՐՍԿԱՆ ԱԽՊԵՐ

Հայկական ժողովրդական երգ
Հնչում է Արամ Խաչատրյանի
Երկրորդ սիմֆոնիայում:

«Որսկան ախպեր» երգը Արամ Խաչատրյանի երկրորդ սիմֆոնիայում հնչում է դանդաղ, թախծոտ:

ԳՈՎՔ ՉԱՄԲԱՐԻՆ

Հատված «Ճուտիկ» մանկական օպերայից

ԳՈՎՔ ՉԱՄԲԱՐԻՆ



ԳՈՎՔ ՉԱՄԲԱՐԻՆ

Ճուտիկ — Շնորհակալ եմ Չամբարից,
Որ չար կատվից փրկեց ինձ:

Խումբ — Կեցցե՛, կեցցե՛, կեցցե՛,
Կեցցե՛ Չամբարը:
Խորտակում է միշտ չարը,
Նա՛ է, նա՛ է, նա՛ է
Ամեն մի բանում
Մեր բակվորին պաշտպանում:

ՍՏԵՂԾՈՒՄ

1. *Դասընկերներով կատարե՛ք դերաբաշխում և բեմադրե՛ք «Ճուտիկ» օպերան:*

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԽՈՍՔ

1. *Ի՞նչ ես հիշում քայլերգի մասին: Երկու–երեք նախադասությամբ ներկայացրո՛ւ ընկերներիդ:*

ԳՆԱՀԱՏՈՒՄ

1. *Կատարի՛ր «Գովք Համբարին» երգը: Թող դասընկերներդ հայտնեն իրենց կարծիքը քո կատարման վերաբերյալ: Ապա դո՛ւ հայտնիր քո կարծիքը նրանց կատարումների մասին:*

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Սովորե՛ք նոտաներով:*



ԲԱԶԵ

Ժողովրդական երգ

Փայտը կառնեմ, քեզ «քը՛շ» կանեմ, «քը՛շ» կանեմ,
Ես մեր բակից քեզ կհանեմ, քեզ «քը՛շ» կանեմ, կհանեմ:
Ա՛յ չար բազե, հեռացի՛ր, հե՛յ,
Մեր բակից շուտ դե կորի՛ր, հե՛յ:

Բազեն վախից թևին տվեց ու թռավ,
Նա մեր բակից գլուխն առավ,
Գլուխն առավ ու կորավ:
Իմ ճուտի՛կ, քուջո՛ւջ արա, ջա՛ն,
Բազեն գնաց, էլ չի գա, ջա՛ն:

ԹԵՄԱ 2
ԻՆՉՊԵՍ Է ՍՏԵՂԾՎՈՒՄ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ (ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՅԲՈՒԲԵՆԸ)

Դու երևի թե հաճախ ես երաժշտություն լսում: Այս թեմային ծանոթանալով՝ կիմանաս, որ երաժշտությունը ստեղծում է թե՛ կոմպոզիտորը, թե՛ ժողովուրդը: Կիմանաս նաև, որ երաժշտություն ստեղծելիս կոմպոզիտորին օգնության են հասնում երաժշտական արտահայտչական միջոցները:

Կոմպոզիտոր
Նվագող
Երգիչ

Նոտա

Երաժշտությունը ստեղծում է կոմպոզիտորը, կատարում են երգիչն ու նվագողը, լսում և արժևորում է ունկնդիրը:

Կոմպոզիտորը գրում է երաժշտությունը: Կոմպոզիտորին օգնում են երաժիշտները՝ ***երգիչ****ները* և ***նվագող****ները*: Նրանց միասին անվանում են ***կատարող****ներ*: Կոմպոզիտորը երաժշտությունը գրի է առնում նոտաներով:

ՈՒՆԿՆԴՐՈՒՄ

ԱՆԴԱՆՏԻՆՈ

Երաժշտ.՝ Արամ Խաչատրյանի

Ուսուցչի օգնությամբ համացանցում գտիր Արամ Խաչատրյանի «Անդանտինո»–ն: **Անդանտինո**ն իտալերեն բառ է, նշանակում է ***դանդաղ տեմպ***: Այն նաև երաժշտական ստեղծագործության անվանում է:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ



Ուշադի՛ր ունկնդրիր «Անդանտինո» ստեղծագործությունը: Արտահայտի՛ր քո վերաբերմունքը:

1. *Ստեղծի՛ր ռիթմական նվագակցություն և նվագակցի՛ր:*

ԿԱՏԱՐՈՒՄ

ԽՆԿԻ ԾԱՌ

Հայկական ժողովրդական երգ

ԽՆԿԻ ԾԱՌ



ԽՆԿԻ ԾԱՌ

Ժողովրդական երգ

Մեր դռանը՝ խնկի ծառ, գյուլո՛ւմ ջան,
Ձեր դռանը՝ խնկի ծառ, գյուլո՛ւմ ջան,
Նախշուն բլբուլ՝ վրեն թառ, գյուլո՛ւմ ջան,
Երթար ու գար, շորոր տար, գյուլո՛ւմ ջան:

Մեր դռանը՝ խնկի ծառ, գյուլո՛ւմ ջան,
Ձեր դռանը՝ խնկի ծառ, գյուլո՛ւմ ջան,
Մարջան բլբուլ՝ վրեն թառ, գյուլո՛ւմ ջան,
Գնար ու գար, թևին տար, գյուլո՛ւմ ջան:

Մեր դռանը՝ խնկի ծառ, գյուլո՛ւմ ջան,
Ձեր դռանը՝ խնկի ծառ, գյուլո՛ւմ ջան,
Ոսկի բլբուլ՝ վրեն թառ, գյուլո՛ւմ ջան,
Երթար ու գար, շվին տար, գյուլո՛ւմ ջան:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *«Խնկի ծառ» երգը երաժշտության ո՞ր տեսակին է պատկանում:*
2. *Ո՞վ է ստեղծում ժողովրդական երգը:*
3. *Ի՞նչ ժողովրդական երգեր գիտես:*

ՍՏԵՂԾՈՒՄ

1. *Տեսե՞լ ես խնկի ծառ: Եթե չես տեսել, գտի՛ր համացանցում և երկու–երեք նախադասությամբ նկարագրի՛ր այդ ծառը:*

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԽՈՍՔ

1. *Համացանցից կամ մեծահասակներից տեղեկացի՛ր, թե ինչ ստեղծագործություններ կան՝ նվիրված Կոմիտասին:*

ԳՆԱՀԱՏՈՒՄ

1. *Կատարի՛ր «Խնկի ծառ» երգը: Թող դասընկերներդ հայտնեն իրենց կարծիքը քո կատարման վերաբերյալ: Դո՛ւ էլ հայտնիր քո կարծիքը նրանց կատարման վերաբերյալ:*

ՍՏԵՂԾՈՒՄ

Փորձի՛ր խոսքերի ռիթմը գրել նոտաներով.
Ամբողջ օրը քուն չունի...



Փորձի՛ր այդ ռիթմով հորինել մեղեդի:
Լուսինեն հորինել է մի այսպիսի մեղեդի և երգել ձեռքի նշաններով.



Ստեղծած մեղեդին գրի՛ր նոտաներով:



Շարունակի՛ր և ավարտի՛ր այս մեղեդին հետևյալ բառերով.

Փորձի՛ր գրված մեղեդին շարունակել և նոտա-ներով գրել հնգագծի վրա:



ԼԵՊՀՈ՛, ԼԵ՛, ԼԵ՛

Հայկական ժողովրդական երգ



ԼԵՊՀՈ՛, ԼԵ՛, ԼԵ՛

Հայկական ժողովրդական երգ

ԼԵՊՀՈ՛, ԼԵ՛, ԼԵ՛

Լեպհո՛, լե՛, լե՛, լեպհո՛, լե՛, լե՛,
Լեպհո՛, լե՛, լե՛, լեպհո՛, լե՛: — *2 անգամ*

Կրկներգ

Հոդալլո՛ ջան, հոդալլո՛ ջան, հոդալլո՛,
Աչեր սիրուն, դարալլո՛ ջան, դարալլո՛: — *2 անգամ*

Ելնենք սարը, բռնենք պարը,
Լեպհո՛, լե՛, լե՛, լեպհո՛, լե՛:
Բացվի օրը, մտնենք ձորը,
Լեպհո՛, լե՛, լե՛, լեպհո՛, լե՛:

Կրկներգ Հոդալլո՛ ջան...

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Տեմպ
Ռիթմ
Մեղեդի
Պաուզա

Գոյություն ունեն երաժշտության արտահայտչական միջոցներ: Դրանք երաժշտության մեջ գործածվող առանձին իմաստային բառեր են՝ *արագ*, *դանդաղ*, *բարձր*, *ցածր*, *ուժեղ*, *մեղմ*, և պայմանական նշաններ՝ ***տեմպ***, ***ռիթմ***, ***մեղեդի***, ***պաուզա***, ***տեմբր, դինամիկա, ռեգիստր***:

Արտահայտչական միջոցների շնորհիվ կոմպոզիտորը ստեղծում է տարբեր տեսակի և տրամադրության երաժշտական ստեղծագործություններ: Իսկ մենք էլ կարողանում ենք տարբերակել ***երաժշտության տեսակները***:

ԲԱՌԱՊԱՇԱՐ

1. *Կազմի՛ր բառակապակցություններ* ***տեմպ***, ***ռիթմ***, ***մեղեդի*** *բառերով*:

ՈՒՆԿՆԴՐՈՒՄ

ԵՐԵՔ ԸՆԿԵՐՈՒՀԻՆԵՐ

Երաժշտ.՝ Դմիտրի Կաբալևսկու

Կաբալևսկին երաժշտության միջոցով ստեղծել է երեք ընկերուհիների կերպարներ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Ի՞նչ արտահայտչական միջոցներ է օգտագործել կոմպոզիտորը:*

2. *Ստեղծի՛ր ռիթմական նվագակցություն և նվագակցի՛ր երգին:*

3. *Դասընկերներով կազմակերպե՛ք երաժշտական խաղ: Խաղացողներից մեկը թող լինի երգը, մյուսը՝ քայլերգը, երրորդը՝ պարերգը: Հանդե՛ս եկեք միասին:*

ՈՒՆԿՆԴՐՈՒՄ

ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ՊԱՐ

Երաժշտ.՝ Յոհաննես Բրամսի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Երաժշտության արտահայտչական ի՞նչ միջոցներ է կիրառել Յ. Բրամսը իր ստեղծագործությունում:*

2. *Քեզ դո՞ւր եկավ այս ստեղծագործությունը: Ինչո՞ւ:*

ՃԱՆԱՉԻ՛Ր ԵՎ ՀԻՇԻ՛Ր

Ռոմանոս Մելիքյանը հայ կոմպոզիտոր է, դիրիժոր և մանկավարժ: Նա ղեկավարել է տարբեր երգչախմբեր: Գրել է բազմաթիվ երգեր և ռոմաններ: Նրա անունով Երևանում երաժշտական ուսումնարան է բացվել:

ԿԱՏԱՐՈՒՄ

ԳԱՐՈՒՆ ԵԿԱՎ

Երաժշտ.՝ Ռոմանոս Մելիքյանի

ԳԱՐՈՒՆ ԵԿԱՎ



ԳԱՐՈՒՆ ԵԿԱՎ

Գարուն եկավ, կանաչ հագավ,
Լե՛, լե՛, լե՛, լե՛, ջա՛ն, լե՛, լե՛,
Նստեց քարին, երգեց կաքավ,
Լե՛, լե՛, լե՛, լե՛, ջա՛ն, լե՛, լե՛:

Բարև գարնան վառ արևին,
Լե՛, լե՛, լե՛, լե՛, ջա՛ն, լե՛, լե՛,
Բարև ծաղկին, ծիլ–տերևին,
Լե՛, լե՛, լե՛, լե՛, ջա՛ն, լե՛, լե՛:



ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *«Գարուն եկավ» երգը կատարե՛ք այնպես, որ այն հնչի մեկ որպես երգ, մեկ որպես պարերգ, մեկ որպես քայլերգ:*

2. *Ռ. Մելիքյանը ի՞նչ արտահայտչական միջոցներ է օգտագործել իր երգում:*

3. *Նորի՛ց ունկնդրեք և կատարե՛ք համապատասխան պարային շարժումներ:*

ՍՏԵՂԾՈՒՄ

1. *Կրկի՛ն ունկնդրիր «Գարուն եկավ» երգը: Փորձի՛ր ինքնուրույն հորինել երգ և մեղեդի՝ նվիրված քո ընկերներին:*

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԽՈՍՔ

1. *Ընտրի՛ր ունկնդրածդ երգերից որևէ մեկը: Ներկայացրո՛ւ դրա արտահայտչական միջոց-ները:*

ԳՆԱՀԱՏՈՒՄ

1. *Կատարի՛ր սովորածդ երգերից մեկը: Թող դասընկերներդ հայտնեն իրենց կարծիքը քո կատարման վերաբերյալ: Դո՛ւ էլ հայտնիր քո կարծիքը նրանց կատարման վերաբերյալ:*

ՀԱՎԵԼՎԱԾ

ԶԱՆԳՆ ԱՌԱՋԻՆ

Խոսք՝ Ն. Միքայելյանի
Երաժշտ.՝ Ա. Լուսինյանի



Հենց որ հնչեղ մեր սեպտեմբերյան
Զանգն առաջին ուրախաձայն,
Մենք ծաղիկներ առած, *2 անգամ*
Քո անուշ կանչով տարված՝
Գիրկդ եկանք, դպրոց:

Մի ջերմ ողջույն՝ մեր զանգի կանչին,
Մեր ուսուցչուհուն առաջին,
Նա մոր նման ժպաց *2 անգամ*
Եվ ուրախ ձայնով ասաց.
— Բարով եկաք դպրոց:

ՆՈՐ ՏԱՐԻ

Խոսք՝ Կ. Գևորգյանի
Երաժշտ.՝ Ռ. Պետրոսյանի



Կրկներգ

Քո լույսով ողողված
Քաղաքում մեր հարազատ
Մենք կապրենք ողջ տարին
Երջանիկ, բարի:

Ե՛կ, դու իջի՛ր պարով,
Աստղերի ջինջ խաղով
Մեր ծառին այս տոնական,
Մեր ծառին այս մոգական,
Որ երազն է մեր կանաչ,
Ջա՛ն, մեր կանաչ:

ՄԱՆՈՒԿՆԵՐՆ ՈՒ ՁՄԵՌ ՊԱՊԻՆ

Խոսք՝ Մ. Կորյունի
Երաժշտ.՝ Գ. Չթչյանի



ԺԱՄԱՆԱԿԴ ԽՆԱՅԻ՛Ր

Խոսք՝ Ռ. Ղարիբյանի
Հայկական ժողովրդական երգ



Իմ պապիկը գործասեր
Ամեն անգամ ինձ կասեր.
— Թե դաս ունես, սովորի՛ր,
Թե գործ ունես, կատարի՛ր:

Օրը կանցնի, կգնա,
Ինչ որ չանես, կմնա,
Եվ մի օր էլ կտեսնես՝
Ուրիշներից հետ կընկնես...

Դու տղա ես, ժիր տղա,
Գործը քեզնից թող դողա:
Ուշքդ վրադ միշտ պահի՛ր,
Ժամանակդ խնայի՛ր:

ՋԱ՛Ն, ՋԱ՛Ն, ՋԱ՛Ն, ԱՇՈՒՆ Է

Խոսք՝ Հ. Աղաբաբի
Երաժշտ.՝ Դ. Ղազարյանի



Ջան, ջան, ջան, աշուն է,
Տես, տես, տես, նախշուն է,
Նուռ, սերկևիլ ուտելու
Նա մեզ այգի է կանչում:

Ջան, ջան, ջան, աշուն է,
Տես, տես, տես, նախշուն է,
Տղա–աղջիկ շարքերով
Նա մեզ դպրոց է կանչում:

ՀՈ՛Յ, ՆԱՐԵ՛

Հայկական ժողովրդական պարերգ



Հոյ, Նարե՛,
Երեսիդ շողին մեռնեմ,
Ջան, Նարե՛,
Աչքերիդ կապույտ ծովին:

Հոյ, Նարե՛,
Ջաղացս՝ պատիկ–պատիկ,
Ջան, Նարե՛,
Աչքերդ՝ նռան հատիկ:

Հոյ, Նարե՛,
Ամեն քեզի տեսնելուց,
Ջան, Նարե՛,
Համ Համբարձում, համ Ջատիկ:

ԿԱՏԱԿԵՐԳ

Հայկական ժողովրդական երգ



— Պուպո՛ւ, պուպո՛ւ, ջա՛ն պուպու,
Հացերն ո՞ւմ ես տալու դու:
— Քե՛զ, քեզ, քեզ, քեզ, չտխրե՛ս,
Մի լավ հաց էլ կտամ քեզ:

ՏՈ, ԼՈՐԻ ԼՈՅ

Հայկական ժողովրդական կատակերգ



— Ո՞ւմ է բերել:
— Մարանին,
Որ նստել է գերանին,
Բուրդ ու բամբակ է գզում,
Քարավանին է սպասում:

ԲԱՌԱՐԱՆ

բաս — տղաների թավ, ցածր երգչաձայն

բալետ — երաժշտական–պարային ներկայացում

դինամիկա — երաժշտության հնչողության ուժգնություն

դիսկանտ — տղա երեխայի բարձր երգչաձայն

դիրիժոր (նվագավար) — երաժշտական նվագախմբի ղեկավար

երաժշտություն — արվեստի տեսակ

երգ — երաժշտության տեսակ

կանտատ — բազմամաս երգային ստեղծագործություն

կոմպոզիտոր — երաժշտություն ստեղծող անձ

հնչյուն — ձայնի տեսակ

մեղեդի — երգ առանց բառերի, եղանակ

նոտա — ձայնի տևողությունը և բարձրությունը գրի առնելու նշան

նվագախումբ — երաժշտությունը միասին կատարող նվագողների խումբ

պար — արվեստի տեսակ

պարերգ — երաժշտության տեսակ

պաուզա — երաժշտական դադար

ռեգիստր (ձայնասահման) — երգչաձայնի կամ նվագարանի ձայնածավալի ցածր, բարձր հնչողությունը

ռիթմ — հնչյունների տևողության հաջորդական կատարումը

ռոմանս — երգի տեսակ է, որը ծագել է իսպանիայում:

սիմֆոնիա — երաժշտական ծավալուն ստեղծագործություն նվագախմբի կատարման համար

սոնատ — բազմամաս երաժշտական ստեղծագործություն: Հիմնականում գրվում է նվագարանների համար:

սոպրանո — աղջիկ երեխայի բարձր երգչաձայնի տեսակ

օպերա — երաժշտական ներկայացում

տակտ — մի շեշտից մյուս շեշտն ընկած հատված

տեմբր — ձայնի երանգը

տեմպ — երաժշտության կատարման արագություն

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ ԵՎ ԱՌԱՐԿԱՅԱՑԱՆԿ

Հեղինակներ	Ստեղծագործություններ	էջեր
Ալթունյան Ռուբեն	«Դպրոցի ճամփան»	6
Բեթհովեն Լյուդվիգ վան	«Ուրախության ձոներգ»	58
Բրամս Յոհաննես	«Հունգարական պար»	81
Լուսինյան Արեգ	«Արջուկների պարը»	23
	«Բարձրիկ Հայաստան»	36
	«Ջանգն առաջին»	85
Խաչատրյան Արամ	«Քայլերգ»	70
	«Օրորոցային»	60
	«Սուսերով պարը»	65
	«Ծերունիների պարը»	17
	«Աղջիկների պարը»	54
	«Վարդագույն աղջիկների պարը»	38, 54
	«Անդանտինո»	75
Կաբալևսկի Դմիտրի	«Քայլերգի երեք տեսակները»	30
	«Երեք ընկերուհիներ»	81
Կանաչյան Բարսեղ	«Քո՛ւն եղիր, բալա՛ս»	11
Կոմիտաս	«Կաքավի երգը»	5
	«Շուշիկի»	17

Ղազարյան Դանիել	«Ջան, ջան, ջան, աշուն է»	88
Մազմանյան Մարտին	«Թխսի և կատվի կռիվը երգը»	61
	«Կատվի երգը»	64
	«Աքլորիկի, թխսի և ճուտիկների երգը»	39
	«Գովք Չամբարին»	71
Մելիքյան Ռոմանոս	«Մանուկն ու ջուրը»	38
	«Գարուն եկավ»	82
Միհրանյան Էմմա	Հատված «Պատանեկան» սիմֆոնիայից	57
Մոցարտ Վոլֆգանգ Ամադեուս	«Օրորոցային»	5
Չայկովսկի Պյոտր Իլյիչ	«Փայտե զինվորների քայլերգը»	26
	«Փոքրիկ կարապների պարը»	65
Չթչյան Գեղունի	«Մանուկներն ու Ձմեռ պապին»	87
Պետրոսյան Ռոբերտ	«Ուղիղ կարգով»	27
	«Նոր տարի»	86
Սպենդիարյան Ալեքսանդր	«Տղամարդկանց պարը»	23
	«Քայլերգ»	26, 70

Հայկական ժողովրդական երգեր	«Արև՛, արև՛»	12
	«Գացե՛ք տեսեք»	45
	«Եկե՛ք մրցենք»	32
	«Ժամանակդ խնայի՛ր»	87
	«Լեպիո՛, լե՛, լե՛»	79
	«Խնկի ծառ»	75
	«Կատակերգ»	89
	«Հայրենիք»	35
	«Հանի՛կ նայ»	67
	«Հոպա զարկե՛ ու քելե»	24
	«Հո՛յ, Նարե՛»	88
	«Մայրիկիս»	69
	«Նախշո՛ւն կաքավ, կաքավի՛կ»	19
	«Որսկան ախպեր»	70
	«Ջա՛ն, գառնո՛ւկ»	41
	«Կատակերգ»	89
	«Տո, լորի լոյ»	89
	«Քեռին եկավ մեր բակը»	60

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱ 1

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՐՔ ԵՎ ՄԱՏՉԵԼԻ ԺԱՆՐԵՐԸ (ՏԵՍԱԿՆԵՐԸ) **4**

Երգ 4

Երգի տեսակները 10

Պար 16

Պարերգ 22

Քայլերգ 26

Քայլերգի տեսակները 30

Երաժշտության տեսակները հանդես են գալիս միասին 38

ԵՆԹԱԹԵՄԱ 1

ՈՒՐ ԵՆ ՄԵՔ ՏԱՆՈՒՄ ԱՅԴ ԺԱՆՐԵՐԸ **50**

Օպերա 50

Բալետ 54

Սիմֆոնիա 56

Երգը օպերայում, բալետում, սիմֆոնիայում 60

Պարը օպերայում, բալետում, սիմֆոնիայում 64

Քայլերգը օպերայում, բալետում, սիմֆոնիայում 70

ԹԵՄԱ 2

ԻՆՉՊԵՍ Է ՍՏԵՂԾՎՈՒՄ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ (ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՅԲՈՒԲԵՆԸ) **74**

Երաժշտական արտահայտչական միջոցները 80

Հավելված 85

Բառարան 90

Անվանացանկ և առարկայացանկ 92

Ց. Վ. ՅՈՒՋԲԱՇՅԱՆ, Ա. Ա. ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ, Վ. Ի. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

2

Հանրակրթական հիմնական դպրոցի
2–րդ դասարանի դասագիրք

Հրատարակչության տնօրեն՝ Էմին Մկրտչյան
Տեխնիկական խմբագիր՝ Նվարդ Փարսադանյան
Խմբագիր և սրբագրիչ՝ Նունիկ Ավետիսյան
Համակարգչային ձևավորումը
և նկարազարդումը՝ Անահիտ Պետրոսյան
Կազմի ձևավորումը՝ Մարիամ Կանայանի
Նոտագրող՝ Հասմիկ Ղուկասյան

Օգտագործված նկարները՝ համացանցային ազատ
օգտագործման կայքերից

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 70x100 1/16
Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 6 տպ. մամուլ

«Զանգակ» հրատարակչություն
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2
Հեռ.՝ (+37410) 23 25 28, էլ. փոստ՝ info@zangak.am
Էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am
Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak

ՎԱՃԱՌՔԻ ԵՆԹԱԿԱ ՉԷ
9 789939 990217
ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
www.zangak.am www.book.am